ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 2.122
N ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-05/18

ք. Երևան «02» 07 2018 թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և <<Երևանի Կապի միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Մ. Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<ՄՌ-11ԱԱ ռադարի ալեհավաքի հենապտուտակային սարքավորման վերանորոգման>> աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ այդ թվում առաջին փուլի աշխատանքի գինը կազմում է 9 000 000 (ինն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն
________________ Ա. Գասպարյան

«Կատարող»
<<Երևանի Կապի Միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զորափի 26
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570015250520100
ՀՎՀՀ՝ 01201156
Տնօրեն
________________ Ա. Մարկոսյան

Ֆինանսական տնօրեն Կ. Դալլյան
Պատ. ապրանք. տնօրեն Գ. Սիմոնյան
Պատ. ապրանք. ղեկավար Հ. Սարգսյան
ՏՏՏԾ պետ Հ. Մնացյան
Գլխ. հաշվապահ Զ. Կանոյան
ՂՔՆԾ պետ Հ. Չիլինգարյան

Հավելված N 1
«02» 07 2018 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-05/18 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
							կատարման	
h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափ. միավ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհան քան.	հասցեն	Ժամկետը
1	45251167	Տես հավելված 1.1	դրամ	30000000	30000000	1	ՀՀ Արարատի մարզ, գ. Հովտաշատ	20.11.2018

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն
Ա. Գասպարյան

«Կատարող»
<<Երևանի Կապի Միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զորափի 26
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570015250520100
ՀՎՀՀ՝ 01201156
Տնօրեն
Մ. Մարկոսյան

Հավելված N 1.1
« 02 » 07 . 2018 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-05/18 *ծածկագրով պայմանագրի*

Տեխնիկական բնութագիրը

1.Գնման առարկա է հանդիսանում շրջանային դիտարկման մայրուղային ռադիոտեղորոշիչ համակարգի՝ ՄՌ11ԱԱ ռադարի ալեհավաքի հենապտուտակային սարքավորման (ՀՊՍ) վերանորոգման աշխատանքները, որոնք ներառում են՝ մատակարարում, տեղադրում, կարգաբերում և սպասարկում:

1.1 ՄՌ11ԱԱ ռադարի ալեհավաքի ՀՊՍ վերանորոգման աշխատանքների մասնագիրը և ծավալը ներկայացվում են կից՝ (Հավելված ա):

1.2 Կատարողը իրականացնում է մատակարարումը համաձայն հավելված ա–ի II կետի:

1.3 Պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանել մինչև 20.11.2018թ.:

1.4 Վճարումն իրականացնել երկու փուլով:
- Առաջին փուլ համարել հավելված ա–ի առաջին կետի 1, 2 և 3 ենթակետերով նախատեսված աշխատանքների կատարումը:
- Առաջին փուլի վճարումն իրականացնել պայմանագրի գնի մինչև 30 տոկոսի չափով՝ 2018թ. Հոկտեմբեր ամսին:
- Մնացած գումարի վճարումն իրականացնել աշխատանքները ամբողջ ծավալով իրականացնելուց հետո:

1.5 Երաշխիքային ժամկետ սահմանել Պատվիրատուի կողմից հանձման-ընդունման ակտի համաձայն աշխատանքներն ընդունելու օրվան հաջորդող օրվանից՝ հաշված 365 օրացույցային օրը:

Հավելված ա)

Գնման առարկայի բնութագիր

Գնման առարկա է հանդիսանում «ՄՌ11ԱԱ ռադարի ալեհավաքի հենապտուտակային սարքավորման վերանորոգման» աշխատանքները, հետևյալ ծավալով՝

I. Հենապտուտակային սարքավորման (ՀՊՍ) պտտման ռեդուկտորների կապիտալ վերանորոգում և գծային առանցքակալի (погонный подшипник) նորով փոխարինում:

1.ՀՊՍ 44-11818 տիպի պտտման ռեդուկտորների կապիտալ վերանորոգում:
- ՀՊՍ երկու 44-11818 տիպի պտտման ռեդուկտորների ապամոնտաժում:
- ՀՊՍ երեք ռեդուկտորների (2 հատ ապամոնտաժված և մեկը՝ նախկինում փոխարինված) ամբողջական քանդում (մասնատում), մաքրում և լվացում բենզինով:
- ՀՊՍ ռեդուկտորների թերությունների հայտնաբերում և վնասված կամ մաշված դետալների կամ հանգույցների փոխարինում նորով:
- Ռեդուկտորների անսարք առաջանցման կցորդիչի (обгонная муфта) փոխարինում նորով և հավաքում
- Ռեդուկտորների լիցքավորում МС-20 տիպի յուղով:
- Ռեդուկտորների ստենդային փորձարկում:

2.ՀՊՍ ատամնանիվի պաշտպանիչ պատյանի վերանորոգում և լրամշակում:
- ՀՊՍ ատամնանիվի ազատում պաշտպանիչ պատյանից:
- Ատամնանիվի մաքրում և լվացում:
- Պաշտպանիչ պատյանի վերանորոգում՝ փոշուց պաշտպանող թաղիքի փոխարինում նորով:
- Պաշտպանիչ պատյանի դեֆորմացիան վերացնելու նպատակով, տեղակայված երեք դոմկրատներից բացի, մոնտաժել ևս երեք հատ կարգաբերող դոմկրատ:
- Պաշտպանիչ պատյանի տեղադրում և ճշգրիտ կարգաբերում տեղակայված դոմկրատներով:

3.Անտենաֆիդերային համակարգի (ԱՖՀ) պտտվող մասի բարձրացնելու նպատակով կատարվող նախապատրաստական աշխատանքներ՝

- Պաշտպանիչ ցանկապատի ապամոնտաժում:
- Համապատասխան հարթակի հավաքում տեղում:
- Ոչ պակաս, քան 10տ քաշ բարձրացնող ունակություն ունեցող հիդրավլիկ դոմկրատների տեղադրում և ամրացում:

4.Անտենաֆիդերային համակարգի (ԱՖՀ) պտտվող մասի բարձրացում, 3687/1112 տիպի նոր գծային առանցքակալի (385կգ) տեղադրմամբ:

- ԱՖՀ անշարժ և շարժական մասերի բաժանում իրարից անջատելով ալիքատարները և համառանցք մալուխները:
- ԱՖՀ շարժական մասի աստիճանական բարձրացում դոմկրատներով, ֆիքսելով բարձիկների օգնությամբ:
- Հին գծային առանցքակալի իջեցման համար համապատասխան հարթակի պատրաստում տեղում:
- Առանցքակալի ազատում պնդօղակներից և տեղափոխում հարթակի վրա:
- Նոր առանցքակալի բարձրացում, տեղափոխում հարթակի վրա, տեղադրում և ամրացում պնդօղակներով:
- ԱՖՀ աստիճանական իջեցում, հետևելով և խիստ պաշտպանելով համակարգի հորիզոնական դիրքը:
- Ալիքատարների և ֆիդերների միացում:
- ՀՊՍ պտտման ռեդուկտորների մոնտաժում:

5.ԱՖՀ ռուպորային կրող կոնստրուկցիայի ծանրության կենտրոնի որոշում և համապատասխան կարգավորում:

6.ԱՖՀ պտտվող մասի բարձրացնելու և գծային առանցքակալի տեղադրման նպատակով պատրաստված կոնստրուկցիաների ապամոնտաժում և պաշտպանիչ ցանկապատի մոնտաժում:

7.Ռեդուկտորների մոնտաժում, ատամնանիվի և առաջանցման կցորդիչի միջև աշխատանքային բացակի կարգավորում, ՀՊՍ-ի փորձնական միացում, ստուգում, կարգաբերում և տեխնիկական սպասարկում համաձայն ՄՌ11ԱԱ ռադարի ЯБ4.039.053 ИМ և 2436962 ИЭ շահագործական փաստաթղթերի:

8.ԱՖՀ կարգաբերում, ստուգում և տեխնիկական սպասարկում համաձայն ЯБ0.209.003 ИЭ և ЯБ0.209.003 ИО շահագործական փաստաթղթերի:

II Մատակարարում

1. ՀՊՍ վերանորոգման և տեխնիկական սպասարկման համար՝
   - անհրաժեշտ է ձեռք բերել և մատակարարել հավելված բ-ում նշված դետալները և նյութերը,
   - անհրաժեշտության դեպքում, ՀՊՍ ռեդուկտորների համար, թերությունների հայտնաբերման աշխատանքների արդյունքում ի հայտ եկած վնասված կամ մաշված դետալների փոխարեն ձեռք բերել նորերը:
2. Ի-ի 3 կետով նախատեսված ԱՖՀ պտտվող մասի բարձրացնելու նպատակով կատարվող նախապատրաստական աշխատանքների համար անհրաժեշտ պարագաները և հարմարանքները ձեռք են բերվում և/կամ պատրաստվում են տեղում, կատարողի կողմից:
3. Մատակարարումը իրականացվում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ Ընկերության պահեստ:

Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, իր ուժերով՝ կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

Աշխատանքների ավարտից հետո, ՀՊՍ գծային առանցքակալի փոխարինելու համար ձեռք բերված պարագաների և գործիքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Պատվիրատուին՝ հետագայում անհրաժեշտության դեպքում օգտագործելու նպատակով:

Հավելված բ)

Վերանորոգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ապրանքների, դետալների և գործիքների ցանկ

N.	Անվանումը	նկարագիր	Չափման միավոր	Քանակը
1.	Գծային առանցքակալ	3687/1112 տիպի	հատ	1
2.	Դոմկրատ հիդրավլիկ	ոչ պակաս 10տ	հատ	4
3.	Առաջանցման կցորդիչ	24-36947 տիպի	հատ	1
4.	Բենզին	Ռեգուլյար	լիտր	60
5.	Յուղ	MC-20 տիպի	լիտր	60

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

_____Ա. Գասպարյան

«Կապարող»
<<Երևանի Կապի Միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զորափի 26
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570015250520100
ՀՎՀՀ՝ 01201156
Տնօրեն

_____Մ. Մարկոսյան

Հավելված N 2
« 02 » 07 2018 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-05/18 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45251167	<<ՄՌ-11ԱԱ ռադարի ալեհավաքի հենապտուտակային սարքավորման վերանորոգման>> աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	9000000	9000000	30000000	30000000

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն
_____ Ա. Գասպարյան

«Կատարող»
<<Երևանի Կապի Միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զորափի 26
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570015250520100
ՀՎՀՀ՝ 01201156
Տնօրեն
_____ Ս. Մարկոսյան

Հավելված 3
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն